



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԳԱՅԻՆ
ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**Մեր Համալսարանը
հնի և նորի համալիր
գաղափարակիրն է**

ՆԱԽԱԳԻԾ ԶԻՆՎՈՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԶԻՆՎՈՐԻ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մերի Զալիկյանին ռազմարվեստը հետաքրքրել է դեռ դպրոցական նստարանից՝ գիտակցությամբ, որ բանակի խնդիրներով ու հոգսերով պետք է հետաքրքրված լինի յուրաքանչյուր քաղաքացի և իր ներդրումն ունենա բանակաշինության հարցում:

Դառնալով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողուհի և ապագա Ճարտարապետ՝ տարիների ընթացքում Մերիի մտքում հասունացավ իր նախասիրությունը և, ինչպես ինքն է ասում, իր պարտքը մասնագիտության տեսանկյունից դիտարկելու գաղափարը:

Եվ, երկար ուսումնասիրություններից, զինվորական առօրյային, հոգեբանությանը, ռազմական ինստիտուտներում առկա խնդիրներին ծանոթանալուց և Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի սպայական անձնակազմի հետ համագործակցելուց հետո, Մերին հղացավ իր՝ դեռևս նախադեպը չունեցող նախագիծը:

Նա նախագծեց ռազմական ինստիտուտի տարածք, որը նորություն էր և բարենպաստ թե՛ ստրատեգիկան, թե՛ աշխարհագրական դիրքի տեսանկյունից. «Բավական լուրջ դժվարություններ առաջացան ուսումնասիրման փուլում. թեման գրեթե ուսումնասիրված չէր, բացակայում էր գրականությունը, և մինչև ինձ արված ուսումնասիրություններ չկար: Իհարկե, կարծում եմ, եթե կա խնդիր, ապա կա նաև դրա լուծումը: Անգնահատելի էր դեկավարիս՝ Անահիտ Վարդանյանի կատարած աշխատանքը, իհարկե նախագծի կատարման հարցում մեծ էր նաև Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ, գեներալ-մայոր Արմեն Ղաիրամանյանի և փոխգնդապետ Գրիգոր Հանեսոլյանի աջակցությունը»:

Մերի Զալիկյանի նախագծած ռազմական ինստիտուտի տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Բազում գյուղի մոտ, նախկին ռազմաբազայի տեղում: Ռազմական համալսարանն իրենից ներկայացնում է մի համալիր, որը կազմված է տարբեր նշանակության մասնաշենքերից և գոտիներից՝ հսկիչ անցագրային կետից, համալսարանի հիմնադրման օրվանից առ այսօր զոհված կուրսանտների փառքի




ծառուղուց, ֆիզ. հրապարակից, ուսումնական մասնաշենքից, ՀՇՖ ֆակուլտետի մասնաշենքից, գորանոցներից, թանգարանից, գրադարանից, բուժկետից, ճաշարանից, հանրակացարանային շենքերից, սպորտային մասնաշենքից, սպարտային ավանից, ավտոհավաքակայանից, ավտոդրոմից, տարբեր նշանակության պահեստներից:

Քանի որ ՀՀ Ջինված ուժերը կազմավորվել են Արցախյան պատերազմից հետո, Մերին հատկանշական է համարել ուսումնական հաստատությունում, թեկուզ սիմվոլիկ, հաղթական կամար ներառել: Նախագծում կամարի մի կողմը հենված է ուսումնական կուրսանտական մասնաշենքի, իսկ մյուս կողմը՝ շտաբի՝ սպայական անձնակազմի շենքի հիմքերին:

«Նախագիծն պաշտպանեցի գերազանցությամբ, և, հիմականում, կարծիքները դրական էին: Սակայն, ինչ խոսք, երբ նախագիծը միայն քեզ համար համալսարանական աշխատանք չէ, կարծիքների կարևորության աստիճանը մի փոքր փոխվում է: Անշուշտ, ինձ համար շատ կարևոր էր գնահատող հանձնաժողովի կարծիքը, քանի որ աշխատանքս գնահատում էին մեր ոլորտում մեծ ավանդ ունեցող պրոֆեսիոնալներ: Անխոս, կարևոր էր նաև նախագծին ծանոթ սպաների կարծիքն ու գնահատականը, քանի որ հենց նրանց էր նվիրված նախագիծն ու իմ աշխատանքային մեկ տարին»:

Ինչ ճանապարհ կանցնի նախագիծն ապագայում, դեռևս անհայտ է: Չնայած բազմաթիվ դրական կարծիքներին ու բարձր գնահատանքից հետո Մերին հուսով է, որ իր նախագիծը հոյակերտ կառույցի կվերածվի: Իսկ մինչ այդ, Մերիի ցանկությունը մեկն է՝ իր զինվոր եղբոր հետ միասին Հայրենիքի բոլոր պաշտպանները լինեն առողջ և ծառայեն խաղաղ երկնքի տակ:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ՝ ՏՈՒՅԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր Տոյատիի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Միխայիլ Կրիշտալի գլխավորությամբ:


Այցը ճանաչողական էր, բայց կարևորվեց համագործակցության պայմանագրի ստորագրմամբ և երկկողմ կապերի ամրապնդման մեծ հեռանկարով: Ռեկտոր Գալստյանը ողջունեց Տոյատիի համալսարանի պատվիրակությանը, ներկայացրեց մեր համալսարանի միջազգային կապերը, գիտական և կրթական անցուղարձը, կարևորեց համատեղ ուսումնական ծրագրերի ու գիտաժողովների կազմակերպումը:

Մեր և ռուսական մի շարք համալսարանների հետ բարեկամությունն ու համագործակցությունը բազմամյա փորձ ունի: Ինչպես նշեց ռեկտոր Միխայիլ Կրիշտալը, Տոյատիի համալսարանում մեծ թվով հայազգի ուսանողներ են սովորում, ինչը ևս հիմնավոր առիթ հանդիսացավ պայմանագրի ստորագրման համար: Ռեկտոր Կրիշտալը, ներկայացնելով իրենց համալսարանի ծավալած գործունեությունը, կարևորեց, հատկապես, կրկնակի դիպլոմ շնորհելու գաղափարը:



Այս համատեքստում՝ ռեկտոր Գալստյանը հատկանշական համարեց մեր, Հայաստանի տնտեսագիտական և Վալենտինա պոլիտեխնիկական համալսարանների միջև կնքված եռակողմ պայմանագիրը, ինչի արդյունքում ուսանողներին կրկնակի դիպլոմ է շնորհվելու:

Համագործակցության հիմնաքարը դնելով և երկկողմ հետաքրքրության հարցերը քննարկելուց հետո՝ ռուսական պատվիրակությունը շրջայց կատարեց մեր համալսարանում, ծանոթացավ լաբորատորիաներին և արվեստանոցներին:



ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Հրանտ Դինք» հիմնադրամի և Գյումրու «Երիտասարդական հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում» փետրվարի 10-14-ը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվում էր Թուրքիայում: Պատվիրակության կազմում էին պրոռեկտորներ Մարինե Ղազարյանը, Վարդգես Եդոյանը, Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը, ՃՏՊՃԺՎՎԳԱ և Պ ամբիոնի վարիչ Ճ.թ. դոցենտ Էմմա Հարությունյանը, ՃՆ և ՃՄՂ ամբիոնի Ճ. թ. դոցենտ Լիաննա Աղաջանյանը, ՃՏՊՃԺՎՎԳԱ և Պ ամբիոնի լաբորատորիայի վարիչ Մարինա Բունաթյանը և մի խումբ ուսանողներ:

Մեր համալսարանի պատվիրակության անդամներն այստեղ հանդիպումներ են ունեցել «Հրանտ Դինք» հիմնադրամի ներկայացուցիչների, ՀԱՅՃԱՐ միության անդամների հետ, այցելել հայկական պատմական տարածքներ, Հայոց Պատրիարքարան, հայկական դպրոցներ, թանգարաններ, հայ Ճարտարապետների նախագծած ժառանգության վայրեր, Ստամբուլի MEF և Kadir Has համալսարաններ:

MEF համալսարանում մեր համալսարանի պատվիրակները հանդես են եկել ելույթներով, ներկայացրել համալսարանի գործունեությունը, պատմությունը, ներկայիս կազմը, կարդացել դասախոսություններ հայ ճարտարապետության վերաբերյալ:

Այստեղ քննարկվել է նաև ուսանողների համար ամառային համատեղ պրակտիկա անցկացնելու մասին հետագա համագործակցության խնդիրները, ինչպես նաև Թուրքիայում, MEF համալսարանի ճարտարապետական ֆակուլտետի ուսանողների հետ միասին, հայկական դպրոցի համար ամառային տաղավար ստեղծելու գաղափարը:



ՀՈՒՍԱԽ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր հյուրընկալվել Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար մարմնի ներկայացուցիչ Արթուր Մովսիսյանը: Նշենք, որ Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը/ԵԳԱԾ/, ՀՀ Նախագահի հովանո ներքո, իրականացնում է գիտական բազմաթիվ ծրագրեր:

Հանդիպմանը ներկա էին ՃՇԱՀ-ի Երիտասարդ մասնագետների միավորման ղեկավար Մանուկ Բարսեղյանը, Ուսանողական խորհրդի նախագահ, ռեկտորի խորհրդական Հովսեփ Հովեյանը, Կարիերայի և Ընդունելության բաժնի ղեկավար Հայկ Սարգսյանը, Երիտասարդ դասախոսներ:

Արթուր Մովսիսյանը, ներկայացնելով ծրագրի առաքելությունը, նշեց, որ հիմնական նպատակը երկրի Երիտասարդ գիտնականների մասնագիտական աճին, զարգացմանը, ինչպես նաև գիտական համակարգի առաջընթացին աջակցելն է և կադրային ներուժի համալրումը: Բանախոսը թվեց նաև ծրագրի հիմնական ուղղությունները, որոնք են՝ Երիտասարդ գիտնականներին միջազգային գիտաժողովներին գործուղման ֆինանսական աջակցությունը, Հայաստանում տարբեր գիտական միջոցառումների անցկացմանը խթանելը, գիտական սարքեր և նյութեր ձեռք բերելու համար ֆինանսական աջակցությունը, գրքերի տպագրության, ինչպես նաև միջազգային հեղինակավոր ամսագրերում գիտական հոդվածների տպագրման խրախուսումը:

Հանդիպումն ընթացավ բուռն քննարկումների և հարց ու պատասխանի մթնոլորտում:



ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՃԵՊԱՆԿԱՐԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, փետրվարի 20-ին, 21-ին և 23-ին տեղի ունեցան «Բաց ստուդիա» շարքի թվով 17-րդ միջոցառման շրջանակներում կազմակերպված վարպետության դասերը:

«Ճեպանկարելով Երևանը» խորագիրը կրող վարպետության դասերը վարեցին նկարիչներ Արարատ Մինասյանը և Զաքար Դեմիրճյանը: Դասերի ընթացքում «Երևան. Ճեպանկարների գիրք»-ի օրինակով քննարկվեցին քաղաքային սքեչի և գրքի նկարագարդման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, կատարման տեխնիկաներն ու նյութերը:

Արարատ Մինասյանը և Զաքար Դեմիրճյանն ուսանողներին պատմեցին Երևանը Ճեպանկարներում արտահայտելու նրբությունների մասին: Նրանց անմիջական մասնակցությամբ և ուղեկցությամբ՝ մասնակիցները ճեպանկարեցին մայրաքաղաք Երևանի՝ նկարիչների կողմից առաջարկված հատվածները:

Դասընթացների ավարտին՝ կատարվեց արված աշխատանքների վերլուծություն և ստացված հմտությունների ամփոփում:

Նշենք, որ Բաց ստուդիա» անունը կրող նախագիծը ՃՀՀԱՀ-ում իրականացվում է 2016 թ-ից, որի հեղինակը Դիգայնի ամբիոնի դասախոս Լիլիթ Ունեդյանն է: Նախագծի շրջանակներում կազմակերպվում է հանդիպում-սեմինարներ, շնորհանդեսներ, վարպետության դասեր և բաց դասախոսություններ:



ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՆ ԻՏԱԼԱՑԻ ՊՐՈՋԵՍՏՈՐՆԵՐԸ

5-օրյա աշխատանքային այցով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան է ժամանել Բոլոնիայի համալսարանի պատվիրակությունը, որի կազմում են Իտալիայի ԱԳ նախարարության ներկայացուցիչ Ռիտա Գոնելլին, Մշակութային ժառանգության և Ճարտարապետության ֆակուլտետների պրոֆեսորներ Մարիանջելա Վանդինին, Մարկո Պրետելլին, Մարկո Օրլանդին և Հայագիտության ամբիոնից Աննա Շիրինյանը:

Մեր համալսարանում իտալական պատվիրակությանն ընդունեց ՀՀ Մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը, ռեկտոր Գագիկ Գալստյանը և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը:

Հայ-իտալական մշակութային համագործակցությունը մշակութային ժառանգության պահպանման համատեքստում երկարամյա պատմություն ունի: Այս այցը հերթականն էր:

Ողջունելով հյուրերին՝ ռեկտոր Գալստյանը նշեց, որ մեր և Բոլոնիայի համալսարանների միջև համագործակցության պայմանագրով արդեն իսկ բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Նա հույս հայտնեց, որ մշակութային ժառանգության

պահմպանմանն ուղղված աշխատանքային այս այցը նույնպես նպատակային ու բեղմնավոր կլինի:

Իտալացի պրոֆեսորները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ Հայաստանում իրենց զգում են, ինչպես սեփական տանը: Հանդիպումից հետո հյուրերը շրջեցին համալսարանում, ծանոթացան Հուշարձանների չափագրման և ավստորոշման լաբորատորիային:



ՂԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԽՈՍԵՑԻՆ՝ ԻՐԵՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Փետրվարի 27-ին մեր համալսարանում նկարների ու քանդակների շքերթ էր. գույներ ու ձևեր: Ցուցահանդեսը մեր շենքի պատերի ներքո, գրեթե, մշտական բնույթ է կրում: Այս անգամ, սակայն, այն յուրատեսակ էր ու բացառիկ: Այցելուների դատին՝ դասախոսների աշխատանքներն էին:

Բացվեց Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Նպատակը մեկն էր՝ ամրապնդել դասախոս-ուսանող երկխոսությունը, բայց ազդեցությունն ու նշանակությունը՝ բազմակի: Ուսանողների հիացական ու հպարտ հայացքները փաստում էին, որ ցուցահանդեսի ասելիքը ներգործել է:

Ողջունելով ներկաներին՝ ռեկտոր Գագիկ Գալստյանը նկատեց, որ այս ցուցահանդեսը ինքնատիպ դասախոսություն է, առավել տեսողական և ուսուցողական: Միջավայր, որում յուրաքանչյուր ուսանող հնարավորություն ունի իր տեսանկյունից բացահայտել դասախոսին:

«Այս ցուցահանդեսը երկակի նշանակություն ունի», - շեշտեց ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Լևոն Թոքմաջյանը: Տեսնելով դասախոսի աշխատանքը՝ ուսանողի մոտ վստահություն է առաջանում նրա նկատմամբ, խոսքն էլ օրենք է դառնում: Այն, որ միայն տեսական դասախոսությունն արդյունավետ չէ, փաստեց նաև ՀՀ վաստակավոր նկարիչ Հրանտ Թադևոսյանը: Կարևոր է, որպեսզի ուսանողը ճանաչի իր դասախոսին նաև որպես մարդ ու ստեղծագործող:

Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչ Գագիկ Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին, պատմեց ցուցահանդեսի մտահղացման և նշանակության մասին: Գ. Հովհաննիսյանը հույս հայտնեց, որ նմանատիպ ցուցահանդեսները շարունակական կլինեն:

Արվեստով, նկարների ու քանդակների գույնով ու ձևով թաթախված Ճեմասրահը մարդաշատ էր, և, այդքանը միայն բավական էր, որպեսզի դասախոսներն ուսանողների կողմից իրենց գնահատված ու սիրված զգային:



ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՉԵՒԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր հյուրընկալվել ՀՀ-ում Չեխիայի արտակարգ և լիազոր դեսպան Պետր Միկիսկան։ Այցը մեր համալսարան առաջին անգամն էր, բայց վճռական ու նպատակային։ Դեսպանի կամքն էր՝ լինել դեսպան ոչ միայն երկու երկրների, այլ նաև համալսարանների միջև, մասնավորապես, դիզայնի ոլորտում։

Դեսպան Միկիսկային մեր համալսարանում ընդունեցին ռեկտոր Գագիկ Գալստյանը, պրոռեկտորներ Մարինա Ղազարյանը, Վարդգես Եդոյանը և Դիզայնի ֆակուլտետի դեկան Արմեն Բուբուշյանը։

Ռեկտոր Գագիկ Գալստյանը ողջունեց դեսպանին՝ նշելով, որ, հատկապես, դիզայնի ոլորտում չեխական համալսարանների հետ համագործակցելու առաջարկը մեծ պատիվ է, և մեր համալսարանը սիրով պատրաստ է լուրջ և հեռանկարային քննարկումների։

Դեսպան Միկիսկան ևս կարևորեց հանդիպումը և ներկայացրեց Չեխիայում դիզայնով զբաղվող՝ հիմնական 2 համալսարանների գործունեությունը, որոնց հետ պատրաստ է անձամբ խորհրդակցել և համագործակցության եզրեր հարթել։



Արմեն Բուբուշյանը դեսպանին ներկայացրեց մեր համալսարանի Դիզայնի ֆակուլտետի առկա ուղղություններն ու առաջարկների փաթեթը, որը նախատեսում է

ուսանողների և դասախոսների փորձի փոխանակում, վարպետության դասեր և համատեղ արակտիկա:

Երկկողմ քննարկումն ամփոփվեց՝ արդեն գարնան վերջ առավել հստակ քննարկումների և համագործակցության նոր պայմանագրերի կնքման ակնկալիքով: Դեսպանը հանդիպման ավարտին շրջեց մեր համալսարանում և հիացավ փետրվարի 27-ին բացված Գծանկարի և քանդակի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ստեղծագործությունների ցուցահանդեսի աշխատանքներով:



ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԵԾԱՐԵՑԻՆ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 25 ուսանող մարտի 6-ին այցելեցին Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան: Սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան 59-րդ տարեդարձի առթիվ՝ ուսանողները ներկայացրին «Արցախյան հերոսներից՝ մերօրյա հերոսներ» համերգային, թատերական ներկայացումը՝ հիշելով և մեծարելով այն հերոսներին, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի:

ՃՀՀԱՀ Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) նախաձեռնությամբ անցկացված թատերական ներկայացման ժամանակ ցուցադրվեցին նաև Արցախյան ու ապրիլյան քառօրյա պատերազմներից դրվագներ: Պարզևատրվեցին ավիացիոն համալսարանի հրամանատարական կազմի անդամներ և սաներ: Ավիացիոն համալսարանի ղեկավարությունն էլ պարզևատրեց ակտիվ ուսանողներին՝ ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստելու և ցուցաբերած ակտիվության համար: Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի պետ, գեներալ-մայոր Դանիել Բալայանի հավաստմամբ՝ սա բավականին լավ նվեր էր, հուշ՝ սպարապետ Վազգեն Սարգսյանին: Նա հայտարարեց, որ Վազգեն Սարգսյանի դերակատարությունը մեծ է եղել ոչ միայն երրորդ հանրապետության, այլև իրենց համալսարանի ստեղծման գործում: ՀԵՀ ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար Արուսյակ Պողոսյանն ընդգծեց հիմնադրամի՝ հոգևոր, հայրենասիրական, մշակութային դաստիարակությանն ուղղված ծրագրային ուղղությունը, որը կարևոր է, հատկապես, հերոսների ճանաչելիության խնդիրը: Նա գովելի համարեց այն, որ նման նախաձեռնությունները գալիս են հենց ուսանողների կողմից. «Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը տոն է ողջ բանակի համար: Իսկ ընտրված

ծնաչափը հենց ռազմական կրթության համար է: Մեծարում ենք մեր Սպարապետին, և նման նախաձեռնություններով նպաստում, որպեսզի նրա կերպարը ճանաչելի լինի նաև մեր ու մեզանից հետո եկող սերունդներին»:

Ռեկտորի խորհրդական, Ուսանողական խորհրդի նախագահ Հովսեփ Հովեյանը տեղեկացրեց, որ արդեն 4-րդ անգամն են խաղում թատերական ներկայացումը, որից մեկը Արցախի հանրապետությունում: Այնուհետև հայտնեց՝ առաջիկայում նույնպես կլինեն միջոցառումներ ՀՀ զինված ուժերի հետ:



ԲԱՑԿԵՑ ՄԵԾ ՀԱՅԱՍԵՐ ԲԱՆՏՐՈՒՇԱՅՏԻՍԻ ՀՈՒՇԱՆԿՅՈՒՆԸ

«Հայերը երբեք չեն դավաճանել իրենց ինքնությանը. նրանք մեծ ճարտարապետներն են...»: Լիտվացի արվեստաբան, պատմաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անունը մեր համալսարանում վաղուց հարազատ է: Հայաստանում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասն այն մարդկանցից էր, ով դեռևս 3 տարի առաջ իր առաքելությունը համարեց դառնալ միջնորդ՝ հայ նոր սերնդի և մեծ հայասեր Բալտրուշայտիսի միջև: Նախ՝ 2015թ-ին, դեսպանի ջանքերով ու նախաձեռնությամբ, տեղի ունեցավ «Զուղան Արաքս գետի ափին և նրա հուշակոթողները» գրքի շնորհանդեսը, հետո արդեն, «Պետրոս Ալոյան» հիմնադրամի հովանավորությամբ, որոշվեց նաև, որ հայ-լիտվական բարեկամության ու համագործակցության մեջ իրենց ակտիվ դերակատարումը պիտի ունենան նաև ուսանողները՝ մեր համալսարանի ուսանողները: Այդպիսով՝ սահմանվեց Յուրգիս

Բալտրուշայտիսի անվան մրցանակ՝ պատմաճարտարապետական ժառանգության պահպանության անվանակարգում լավագույն ուսանողական աշխատանքի համար: Նախաձեռնությունը հաջողությամբ կյանքի կոչվեց և առաջին մրցանակակիրը՝ Ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի Շողեր Խաչատրյանն արժանացավ խոշոր պարգևի: Մրցույթը շարունակական է, և առաջիկա 5 տարիներին նույնպես «Պետրոս Ալոյան» հիմնադրամը դրամական մրցանակը կշնորհի լավագույն ուսանողին:

Այս տարիներին հիմնված և արդեն ամրապնդված բարեկամությունը թերի կլիներ, եթե Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ղեկավարությունը չորոշեր՝ ի նշան երախտիքի, յուրատեսակ վերաբերմունք ցուցաբերել մեծ հայասերին և իր ստեղծագործական կյանքի զգալի մասը հայ ժողովրդի մշակույթին ու ճարտարապետական ժառանգությանը նվիրած մարդուն:

Մարտի 7-ին՝ մեր համալսարանի Ճարտարապետական արվեստանոցում բացվեց Յուրգիս Բալտրուշայտիսի հուշանկյունը, որտեղ նրա՝ հայկական խաչքարերին ու ճարտարապետությանը նվիրված աշխատություններն են, նրա կյանքն ու գործունեությունը ներկայացնող դրվագները:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին ՃՀՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ Մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, ՀՀ-ում Լիտվայի, Չեխիայի, Ճապոնիայի, Ղազախստանի, Վրաստանի, Բուլղարիայի, Բելոռուսի արտակարգ և լիազոր դեսպանները, սրբազան հայրեր, ՃՀՀԱՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Իր ողջույնի խոսքում՝ ռեկտոր Գալստյանը շեշտադրեց, հատկապես, հայ-լիտվական հարաբերությունների մեջ Յուրգիս Բալտրուշայտիսի ծանրակշիռ ներդրումը՝ հայկական ճարտարապետության հետազոտման ու պահպանման ոլորտում: Ռեկտորը նշեց, որ Ճարտարապետական արվեստանոցում բացված հուշանկյունը մեծ արվեստաբանին կդարձի մեր համալսարանի հավերժ բարեկամն ու անդամը, իսկ ուսանողներն ու դասախոսները հնարավորություն կունենան ծանոթանալ նրա թողած ժառանգությանը:



Ներկաներին ողջունեց նաև ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը: Նա իր շնորհակալությունը հայտնելով մեր համալսարանի

ղեկավարությանը՝ մեջբերեց Յուրգիս Բալտրուշայտիսի որդու խոսքերը, ով փոխանցել էր, որ մի օր անապաման գալու է Հայաստան, երկիր, որը հոր սիրտն էր:

Յուրգիս Բալտրուշայտիսի մասին ավելի պատկերավոր խոսեցին վավերագրական կադրերը, որոնցում հաստատվում էր նրա սերն ու հետաքրքրությունն առ Հայաստան, առ հայկական ճարտարապետություն:

Մարդաշատ էր նաև ճարտարապետական արվեստանոցը, որտեղ մեծ հանդիսությամբ բացվեց Յուրգիս Բալտրուշայտիսի հուշանկյունը: Արվեստաբանին նվիրված օրն այսքանով չամփոփվեց. ներկաներին Օդետա Ժուկաուսկիենեն ներկայացրեց դասախոսություն՝ «Յուրգիս Բալտրուշայտիսի համեմատական ուսումնասիրությունները» թեմայով:



ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴՈՑԵՆՏԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի ֆ.մ.գ.թ. դոցենտ Մարինե Գրիգորյանն ԱՊՀ երկրների շարքում բարձր է պահել ոչ միայն մեր համալսարանի, այլև Հայաստանի անունը:

ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի կողմից կազմակերպված՝ ԱՊՀ երկրների կրթության բնագավառի երիտասարդ մասնագետների մրցույթում Մարինե Գրիգորյանը, մեր երկիրը ներկայացնող մասնակիցներից միակն է, ով արժանացել է հաղթանակի:

Մրցույթին մասնակցել են Հայաստանի, Բելառուսի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի՝ մինչև 35 տարեկան երիտասարդ մասնագետները, ում գիտական աշխատանքները, գիտական աստիճաններն ու կոչումները քննության է առել յուրաքանչյուր երկրի Մշակույթի նախարարներից բաղկացած ժյուրին:

Մրցանակաբաշխության արարողությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 21-ին Ադրբեջանում: Մարինե Գրիգորյանը, հասկանալի պատճառներով, արարողությանը ներկա չի գտնվել, սակայն նրա մրցանակը՝ նույնպիսի հանդիսությամբ կհանձնվի հունիսին՝ Գորիս քաղաքում:



ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԹԻՄԸ՝ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄԱԿԻՐ

ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեն 1-ին կարգի դիպլոմի է արժանացրել ՃՀՀԱՀ-ի նախագծային խմբին՝ հանձին Կարեն Ռաշիդյանցի, Խաչատուր Թադևոսյանի, Ավետիս Խաչատրյանի և Կարեն Մկրտչյանի:

Մեր համալսարանականներն արժանացել է դիպլոմի՝ “Տարվա նախագիծ և կառույց-2017” ճարտարապետական մրցույթ ցուցահանդեսի “Լանդշաֆտային ճարտարապետություն” անվանակարգում “Իսահակի աղբյուր” հանգստի գոտու համալիր Շուշիում ներկայացված աշխատանքի համար:



ՌԵԿՏՈՐ ԳԱՍՏՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԵԿՄ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵՂԱՆՈՎ

Պատվով տեղեկացնում ենք, որ Պաշտպանության նախարարության 5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի կազմավորման 25-րդ տարեդարձի, ինչպես նաև Երկրապահ կամավորականների միության ծրագրերի իրականացմանը գործունե աջակցություն ցուցաբերելու համար, Հայաստանի հանրապետության Երկրապահ կամավորների միության “5-րդ բրիգադ, 25 տարի” հոբելյանական մեդալով պարգևատրվել է ՃՇՀԱՀ ռեկտոր, ՀՀ Շինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանը:



ՀԱՅԿԱՆ 2017-Ի ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ԳՏԱՆ ԻՐԵՆՑ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

«Ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն նախագահ»՝ Ճանաչվեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Հովսեփ Հովեյանը:



ՄԵՐ ՇԱՆՄԱՏԻՍՏՈՒՀԻՆԵՐԸ ՊԱՐԳԱՏՐՎԵՑԻՆ «ՌԱՖԱՅԵԼ ՎԱՀԱՆՅԱՆ» ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, Հայաստանի կանանց բարձրագույն մրցաշարերում հաջող ելույթների, ինչպես նաև միջբուհական առաջնություններում մշտապես բարձր արդյունքներ ցուցաբերելու համար, «Ռաֆայել Վահանյան» մեդալներով պարգևատրվեցին մեր բուհի շախմատի հավաքականի գլխավոր մարզիչ Լիլիթ Գալոյանը, ուսանողուհիներ Սիրանուշ Ղուկասյանը և Նարե Առաքելյանը: Մարտի 6-ին ռեկտորատի նիստի ժամանակ մեր

շախմատիստուհիներին մեդալներն ու պատվոգրերը հանձնեցին ռեկտոր Գագիկ Գալստյանն ու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ամբիոնի վարիչ Հակոբ Բադալյանը:

Շնորհավորում ենք մեր համալսարանականներին, ցանկանում ենք միայն հաղթանակներ:



ՈՍԿԵ ՄԵԴԱԼ՝ ՄԵՐ ՌԵԿՏՈՐԻՆ

«Վան-Վասպուրական» ՀԿ Նախագահ Ռ. Հովնանյանը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանին պարգևատրել է ոսկե մեդալով՝ «Վան-Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպության աշխատանքներին գործուն օգնության և օժանդակության համար:

